

## ԱՎԱԳ ՇԱԲԱՁ-Լ ՄԱՅՐ ԱԹ-ՈՒ ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱԾՆՈՒՄ

### **ԾԱՂԿԱԶԱՐԴ**

Ավագ շաբաթվան, որն անվանվում է նաև Չարչարանաց շաբաթ, նախորդում է ծաղկազարդը, որը խորհրդանշում է Հիսուսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ:

Ն. Ս. Օ. Տ. Տարեզին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ծաղկազարդի փոնը հօջակել է նաև Մանուկների Օրինության օր և արդեն մի քանի դարի է, ինչ այդ օրը Հայասպանյաց եկեղեցներում կալարկում է մանուկների օրինություն: Զևավոր-ված ավանդույթով, այս դարի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, առավորյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետին իր օրինությունը դրվեց մանուկներին:

Ծաղկազարդի փոնին Նորին Սրբությունն այցելեց նաև Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր Ս. Պատրարք մատուցելուց հետո՝ Հայրապետական իր օրինությունը վերսպին բաշխեց այնպես հավաքված մանուկներին:

**ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲՁԻ** - «Անպատու թգենու» առակի և Երուսաղեմի դամարի մաքրագործման հիշարակման օրն է: Մայր Տաճարում, լուսարարապետի պաշտոնակալիքար Նոգեշնորի Տ. Արդակ Վարդապետ Տիգրանյանի ժամօրինությամբ, կալարվեցին գիշերային, առավորյան և երեկոյան ժամերգություններ, որոնց ընթացքում ընթերցվեցին օրվա խորհուրդը ներկայացնող ասդվածաշնչական հարվածներ:

**ԱՎԱԳ ԵՐԵՔՇԱԲՁԻ** - «Տասը կույսերի» առակի հիշարակումն է. Մայր Տաճարում, Տ. Արդակ Վարդապետ Տիգրանյանի ժամօրինությամբ, կալարվեցին գիշերային, առավորյան և երեկոյան ժամերգություններ:

Երեկոյան ժամերգության ընթացքում, «Հայր գթած» աղոթքից հետո, դամարի արյան դուրս եկան դրան դայիրներ, ովքեր դրան կույսերի օրինակով՝ իրենց ձեռքում վառվող մոմեր ունեն, և կանգնեցին Ս. Ավելարանի առաջ: Եվ երբ քահանան ավելարանական հարվածից ընթերցեց «Որովհեքս ահա մեր լապտերները հանգչում են» (Մագիթ. ԻՆ 8) խոսքերը, եկեղեցականներից մեկը, ի նշան հիմար կույսերի մարած լապտերների, մոմերից հինգը հանգցրեց:

Կույսերի լապտերները խորհրդանշում են կուսության շնորհը, իսկ դրանց միջի պարունակությունը՝ յուղը՝ ողորմությունն ու մարդասիրությունը. «Յուղը լույսի նյութն է, իսկ ողորմությունն է՝ նշանական կյանքի ու լույսի» (Ս. Գրիգոր Տաթևացի): Ենքնապես, մոմերը խորհրդանշիչն են առաքինությունների, իսկ դրանց լույսը՝ առաքինազարդ գործերի, քանի որ սույ առաքինությունը փրկության չի կարող արժանացնել (մարած լապտեր և մոմ), այլ հարկավոր են նաև գործեր, մանավանդ՝

Եղանակը հայութեածուս պահանջութիւն է ու պահանջաւութիւն է



ողորմության. «Ողորմությունն անարգել մինում է Ասպծո, հրեշտակների ու սուրբերի մոլոր և բոլոր մեղքերը ջնջում ու քավում»:

«Եփսարար, երկնային հարսանյաց սրահ մինելու համար անհրաժեշտ են ինչպես առաքինություններ, այնպես է՝ առաքինի գործեր, որպեսզի այդ ամենն արվի ի սեր Քրիստոս Ասպծո և Արքայությանն արժանանալու համար, քանզի եթե դրանցից գեր մնելու պակասի՝ երկու լապտերը կմարի»:

**ԱՎԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ** - Բեթանիայում պոռնիկ կնոջ կողմից Հիսուսի ուրբերի խորհրդանշական օճան, այլև Տիրոջ մագնության հիշապակման օրն է: Նախորդ երկու օրերի պես, Ավագ չորեքշաբթի ևս կարարվեցին գիշերային, առավորյան և երեկոյան ժամերգություններ, որոնց ընթացքում ընթերցվեցին օրվա խորհուրդը պարունակող սուրբգորային հարվածներ:

**ԱՎԱԳ ՉԱՐԱԺՎԱ** հիմնական արարողություններն սկսվեցին Ավագ հինգշաբթի, որը՝ Կերենաբանն Տիրոջ կողմից Ս. Դաղորդության հոգենորոգ ու քավշարար խորհրդի և խոնարիւթյան ծայրագոյն դրսւորումի արդահայրման հիշապակության օրն է:

Խորհրդավոր՝ Վերջին ընթրիքի ժամանակ Աստվածորդին, «ի քաւութիւն և ի թուրթիւն մեղաց», հացի ու զինու միջոցով Իր հեփսորդներին բաշխեց Իր փրկարար Ս. Մարմինն ու Ս. Արյունը:

**ԱՎԱԳ ԴԻՆԳՇԱԲԹԻ** - Գիշերային և առավորյան ժամերգություններից հետո, ի հիշապակ Ս. Դաղորդության խորհրդի հաստակման, Ավագ հինգշաբթի, առավորյան, Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա, Մայր Աթոռի լուսարարապետի պաշտոնակարար Հոգեշնորի Տ. Արքակ վարդապետ Տիգրանյանի կողմից, մագրոցվեց Ս. Պատրարք, որի ընթացքում, «Դայր մեր»-ից առաջ, Հոգեշնորի Տայր Սուրբն ընթերցեց Ս. Բարսեղ Կեսարացու Ս. Դաղորդության խորհրդին նվիրված ճատը: Բազմաթիվ հավաքացյալներ, ովքեր Մեծի Պահոց շրջանում իրենք իրենց նախապատրաստել էին Տերունի Ս. Մարմին ու Ս. Արյան ճաշակմանը, հավաքով և երկյուղով մոլորդան կենդանարար ու քավշարար Սուրբ Հաղորդությանը:

Կեսօրից հետո Մայր Տաճարի Ավագ Ս. Խորանում կարարվեց Օդինվայի արարողությունը՝ ձեռամբ Ն. Ս. Ո. Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի: Նախքան Օդինվայի հուզիչ և խորապես փափորիչ պահը՝ Երգվեցին հոգեպարար շարականներ, որոնք մեկնարանում էին սրբազն այս արարողության հոգենոր իմաստները: Այնուհետև ընթերցվեցին աղոթքներ ու սուրբգորային հարվածներ: Այս ամենից զարդ կարդացվեց Հովհաննես Պլուտ Երգնկացի վարդապետի գրած «Սիրո մասին» աղոթքը, այս օրինվեցին ջուրը և յուղը (խորհեանշում է Բեթանիայում պոռնիկ կնոջ կողմից Հիսուս Քրիստոսի ուրբերին հեղված անուշանոր յուղը), որից հետո հանդիսապես Վեհափառ Հայրապետը, որպես խոնարի մի սպասավոր, կարգած փասր ճեմարանական և ԵՊԿ աստվածարանական ֆակուլտետի երկու ուսանողների ուրբերի լվացման ու օրինված յուղով օծման կարգը:

Արարողությունն ավարտվեց ավելարաբանական ընթերցմամբ, որով մեկ անգամ ևս հիշապակվեց էր Տիրոջ ձեռքով Իր աշակերպների Ուժնվան:

Հավարդ Ուժնվայի՝ հավարացյալ հայորդիներին բաժանվեց օրինված յուղ: Ինչպես մեղավոր կինը Տիրոջ ուրեմն օծեց յուղով և իր զոշման համար ներում սրացավ Նրանից, նոյնպես և մենք նախատառ պետք է խորապես զղանք, ապաշխարենք, խոսքովանենք և ապա՝ օրինված յուղով օծենք մեզ, որպեսզի ըստ մեր հավաքքի Բարձրյան Ասպձուց եռողու և մարմնի բժշկություն սպանանք:

Ավագ հինգշարքի, Ս. Եկեղեցու հնավանդ ավանդույթի համաձայն, կապարվեց Ասրվածորդու մաքնության ու չարչարանաց հիշապակությունը, որը կոչվում է Խոսկարում:

Սույն կարգը կապարվեց շքեղ հանդիսավորությամբ, գիշերային ժամերգության ընթացքում, եղագամայի շարականների երգեցողության ընդհափումներով Մայրավանքի միաբանների կողմից ընթերցվեց ավելարաբանական ընդարձակ յոթ հավածած՝ ներկայացնելով Գերեսեմանիում Տիրոջ մաքնությունը, ձերբակալությունը և չարչարանքները: Ցուրաբանը ավելարաբանական հավածածի ընթերցումից հետո հանգնում էին Սուրբ Խորանում դրված փասներկու խորեղանշական մոմերից (որոնցից մեկը սև գույնի էր՝ ուրացող Հուդա Խոկարիովկացու նշանակը) երկուսը: Խոսկարման կարգի ժամանակ, «Տեր յերկնից» շարականի երգեցողությունից հետո, մարվեցին Եկեղեցու լույսերը (Ս. Խորանում միայն մի մեծ մոմ էր բներեկուն լույսով լուսավորում իր շրջապատը՝ խորեղանշելով Դիսու Ջրիսկոսին, որ մնաց մենակ մաքնությունից հետո), ապա սկսվեց «Փառը ի բարձուն» օրիներգը, որի վերջավորությանը Սուրբ Տաճարում սրբեղծված աղոթալից ու խորեղավոր մթնոլորդում խավարման կարգի նշանակությունն արդահայլող ու դրանից ուսանելիք ճշմարդկությունների մասին բովանդակալից քարոզով հանդես եկավ Գերաշնորհ Տ. Տաթև արքայիսկոպոս Սարգսյանը: Գերաշնորհ Արքաց Նայրն իր խորեղանձությունների ընթացքում անդադարձավ նաև կարևոր հերկյալ հարցին, որ է՝ հայորդու պահպաժը սուրբ Եկեղեցու ասրվածային հարկի ներքը:

**ԱՎԱԳ ՈՒՐԳԱՅԹ** - Այդ օրը Մայր Տաճարում կապարվեց Տիրոջ խաչելության ու խաչի իջեցման՝ թաղման կարգը: Կեսօրին, Տ. Արփակ Վարդապետ Տիգրանյանի ժամօրինությամբ, ճաշու ժամերգության ընթացքում, կապարվեց Ջրիսկոսի խաչելության խորեղանշական կարգը: Ընթերցվեցին ավելարաբանական հավածածներ, որոնք բովանդակում էին Ջրիսկոսի՝ Պիղապոսի մոտք փարվելը, մահվան վճիռը, խաչելությունը և այլն: Ի դեպ, Նայոց Եկեղեցու ավանդույթի համաձայն, Ավագ ուրբար Սուրբ Պատրարագ չի մարդուցվում, այդ օրը Ասրվածորդին, իբրև Կենդանի պատրարագ, «Գառն Ասրուծոյ», ինքն իրեն խաչի վրա զոհաբերելով, ընծայվեց Նայր Ասրծուն: Երևկոյան, Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ Ամենայն Նայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կապարվեց Ջրիսկոսի թաղման կարգը: Նախապես ծաղիկներով ու եղևնու ճյուղերով զարդարված Տիրոջ խորեղանշական գերեզմանը, հանդիսավոր թափորով Մայր Տաճարի շորջ պատճեցվելուց հետո, կրկին բերվեց Տաճար, այնուհետև «Խաչի քո Ջրիսկոս» փառարանական շարականով ու «Պահպանիչ» ա-

դոթքի ընթերցումով ավարտվեց Տիրոջ թաղման կարգը: Նավարպ թաղման կարգի Նորին Սրբությունն իր հայրապետական բովանդակալից խոսքն ուղղեց հավաքացյալ հայորդիներին:

**ԱՎԱԳ ՇԱԲՈՁ -** Վաղ առավույան S. Արքակ վարդապետ Տիգրանյանի ժամօրինությամբ կարարվեցին զիշերային ու առավույան ժամերգություններ: Շեպմիջօրենին, լուսարանները քանդեցին ծաղիկներից ու եղևնու թավ ոսկերից հյուսված գերունի գերեզմանը՝ ծաղիկներն ու ճյուղերը հավաքացյալներին բաժանելու համար:

Երեկոյան, հավարպ ժամերգության, Դայոց Եկեղեցու հենավանդ ավանդույթի համաձայն, սուրբքային հարվածներից հետո, երր Ավագ U. Խորանից մասնավոր շուրով հնչեց օրվա ընթերցվածներից վերջինը՝ Դանիելի մարգարելությունից, սկսվեց Սուրբ Հարության Ծրագալույցի Սուրբ Պապարագի «ահեղ խորիուրող»: U. Պապարագի ընթացքում, Սուրբ Հարության ժամամուտի երգեցողությամբ, ավելիվեց Տիրոջ Հրաշափառ Հարության բարի լուրը. «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Օրիս պապարագին էր Գերաշնորի Տ. Եզնիկ եակիւոպս Պետրոսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց պապարագի Սրբազն Հայրը (լրե՞ս էջ 46):

Սուրբ Պապարագին իր մասնակցությունն էր բերել ազգիս Վեհափառ Հայրապետը:

Նավարպ U. Պապարագի, Նորին Սրբության հանդիսապետությամբ, կարարվեց նախապոնակ:

Հանդիսավոր թափորը «Այսօր յարեալ» շարականի երգեցողությամբ ուղղվեց Վեհարան՝ կապարելու գնորիների արարողություն և Դայոց Հոր Սուրբ և Օծակ Աջ համբուրելով՝ U. Զապէկի տոնի կապակցությամբ Նորին Սրբությանը շնորհավորելու:

Այնուհետև Մայրավանքի միաբաններից ու Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներից կազմված թափորը, լուսարարապետի պաշտոնակափար Հոգեշնորի S. Արքակ վարդապետ Տիգրանյանի առաջնորդությամբ, շարժվեց դեպի Մայր Աթոռի սեղանապուն՝ ճշմարիկ սիրով միացյալ «ընդ սիրոյն Քրիստոսի» միասին վայելելու Խըթման ընթրիքը:

**ԶԱՏԻԿ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ -** Առավույան ժամերգությանը երգվեց օրվա խորիուրդն ու իմաստըն իրենում կրող «Այսօր յարեալ ի մեռելոց» շարականը:

Առավույան ժամերգությունից հետո Ն. U. O. S. S. Գարեգին Բ Ամենայն Դայոց Կաթողիկոսը «Հրաշափառ»-ով և մեծահանդես թափորի ուղեկցությամբ ուղղվեց դեպի Մայր Տաճար՝ մասուցելու զարկական U. Պապարագ և Դիտուսի Հարության ավելիխտվ հայրապետական պատգամը հղելու համայն հայությանը:

Վեհափառ Հայրապետը Հարության խորիուրդը իր ողջունն ու շնորհավորանքը հղեց Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահա-

կալներին, ողջ հոգևոր դասին, Հայաստանի Հանրապետության ավագանուն և համայն հայությանը (գլուխ էջ 3):

Դափարագի սրբազն արարողությանը ներկա էին Ռ նախազահ Ռոքերիք Քոչարյանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախազահ Արևադի Ղուկասյանը, Ռ Ազգային Ժողովի նախազահ Արմեն Խաչարյանը, Ռ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Ազգային Ժողովի պարզամակորներ, նախարարներ, Հայաստանում հավաքարմագրված դիվանագերներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Գերազույն Հոգևոր Խորհրդի անդամներ, արվեստի և մշակույթի գործիչներ, բազմաթիվ հավաքացյալներ:

Սուրբ Դափարագի ավարտին Վեհարանի հանդիսությունների սրահում գեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետին ամենքին վերսպին տվեց Քրիստոսի Հրաշափառ Հարության ավերիսը:

Երկուշաբթի՝ ապրիլի 1-ին, ըստ Հայ Առաքելական Եկեղեցու դուռակարգի, նընշեցյալների հիշապակության օրն է՝ մեռելոց:

## ԱՐՁՈՒՐ ՍԱՐԿԱՎԱԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ